

ՊԱՅՄԱՆՔ

ՊԱՆԼԱՐԻՍ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ՍՐՏԱՍԱՀԱՆՈՒՄ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ձր.

Վեցամսեայ . . . 7 Ձր.


ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տօլար

Վեցամսեայ 1. 50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման արդր
20 սանթիմ



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Կ Ա Յ Ի Ն Ե Ի Կ Ա Ղ Ա Կ Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՈՐԵՆ ԶՈՐԵՔԵՄԱՐԹԻ ԵՒ ՇՈՐԱՍԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Ирауунк

ВАРНА

Կրտսրոշիւնք եւս լեւ
տրոշիւ

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՍԸ ՊԵՏԲԸ

Կովկասահայոց իրաւունքներուն վերադարձուիլը, Կովկասեան երկրին փոխարքայութեան վերածուիլը և ամբողջ Ռուսիոյ համար երեսփոխանական ժողովի մը հաստատումը կը խոստանան մեր ռուսահայ եղբայրներուն ապահովութիւն կեանքի ու ինչքի և ազատ ասպարէզ զարգանալու թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս:

Բայց հաւանականաբար մեր ընկերվարա—յեղափոխական կուսակցութիւնները այդ ամենով զհնչարտի մնան և պիտի շարունակեն իրենց հակակառավարական գործունէութիւնը միացած ռուս յեղափոխական կուսակցութիւններու որոնց նպատակը հայ գաղտին ապահովելը մը խոստանալէ ոչ թէ միայն հեռի է, այլևն աւելորդ (ոչ-բունական) ձևի մը տակ հայ տարրը ռուսական խոշոր զանգուածին հետ խառնելու և միացնելու կը ձգտուի: Արդէն իսկ մեր հին հնչարտեան յեղ. կուսակցութիւնը Կովկասի մէջ ազգայնական հողը ձգտելով լոկ ընկերվարական հողին վրայ գործելու նոր ուղղութիւն մը ընդունած և մտած է ռուս ընկերվարական կուսակցութիւններու դրօշին և ծրագրին տակ: Բայց ազգայնութիւնը (հայութիւնը) զոհելէ յետոյ եթէ Ռուսիան արքայութեան իսկ վերածուի մեզ համար ի՞նչ արժէք կրնայ ունենալ: — Ոչինչ:

Ըստ մեզ հայը՝ երկրագնդի որ մասին վրայ ալ գտնուի, մեր հայրենիքի սատառապագին օրերուն գլխաւորապէս պէտք է հոգաւոր մեր ամբողջ ազգի գոյութեան պահպանումին, որով միայն կարող կրնանք ըլլալ մեր մայր հայրենիքի ինքնավարութիւնը ձեռք բերել: Այս պէտք է ըլլայ մեր միակ իտէալը, թէ՛ Կովկասի մէջ և թէ՛ ամէն տեղ ուր որ խումբ մը հայ կը գտնուի: Եւ մեր այդ իտէալին իրականացմանը դէմ ելլող մեծագոյն ար-

գելքներուն յաղթելու համար անհրաժեշտ պէտք ունինք հայութեան ամէն դասակարգերու ջանքերուն ու զոհողութիւններուն միանգամայն և այդ ջանքերն ու զոհողութիւնները ի մի համախմբելու համար նախ հարկ է մեզ ազգային—քաղաքական ուղի մը գծել, ուղի մը՝ որ մեզ ըստ բաւականին ապահովելը մը խոստանայ և ամբողջ հայութիւնը այդ ուղիէն ընթանայ:

Պէտք է խոստովանել թէ մեր հայրենասիրական գործունէութեան ներկայ եղանակը քառասուն է. որովհետեւ զատ զատ կուսակցութիւններու այսօրուան զիրար հակասող, իրարու գործաւոր ու զիրար չհարգող ուղղութիւնները, եթէ կրկնապատկուած ուժերով ալ շարունակուին, ոչ մի զգալի արդիւնք չը բերելէ զատ, հայկական դատը ենթարկած են այն քառաթի մակոյկի վիճակին որ ալեկոծեալ ժողովի վրայ թիավարներու և զեկավարին ներհակ վարմունքովը ի շուրջ կը տատանի և սահմանուած է վերահաս մեծ փոթորիկով մը, կամ ծովամայն ըլլալու և կամ ժայռի մը բաղնիքով ջախջախուելու:

Այսօր Ռուսիան Բելգիի և Կալիցիի հայահալած ծրագրերն էր շնչած և հայերը սիրաշահելու քաղաքականութիւն մը ընդգրկած է: Այս քաղաքականութեանէն ո՞ր աստիճան կրնանք օգտուիլ, և ի՞նչ դիրք բռնելու ենք այլևս դէպի ռուս կառավարութիւնը: Պէտք է ազգովին լուրջ խորհրդակցութեան մը նիւթ ընել այս, և ըստ այնմ վարուիլ:

Կարծողներ կան թէ քանի մը տարիներէ ի վեր Անգլիան և Պոլիսով ու Փոքր Ասիայով այնչափ չը հետաքրքրուիր, և ռուսի Ռուսիոյ յառաջխաղացումը արգիւ լելու համար մեծ զոհողութիւններ ընելու տրամադիր չէ: Պէտք է քննել այս կարեւոր պարագան և անոր համեմատ որոշել մեր յենակետերը:

Առաջարկողներ ալ կան որ ջանք թափուի թուրք կառավարու-

թեան հետ համաձայնութեան մը գալու: Համաձայնութիւն մը՝ որ գոնէ արդի Սուլթանին մահէն յետոյ պիտի կրնայ ելլել, ըստ սմանց, թրքահայերը ապահով զարգացումի և բարգաւաճումի վիճակի մը մէջ գնել, ինչպէս էր Ալէքսանտր Բ. ի ատեն կովկասահայութեան վիճակը:

Վերջապէս մեր ազգային գործունէութեան ուղին գծելու համար այս և ասոնց նման շատ մը կարծիքներ կան, որոնց ամէնը կը հարկադրեն Հայերս լուրջ խոր հրդակցութիւն մը ընելու, մանաւանդ ներկայ պարագային մէջ, երբ հայութեան մեծագոյն մէկ զանգուածը, ռուսահայութիւնը, իր դիրքը ապահոված է այլևս և կը գտնուի նոր դարամուտի մը սեւամին վրայ:

Ժամանակն է որ հայ յեղափոխականները, թաղ. խորհուրդներ, այլ և այլ հայ ընկերութիւններ և խումբեր դիմում ընեն իրենցմէ բարձր մարմիններու, մինչեւ մեր վեհ. Կաթողիկոսին և խնդրեն որ Սաինքը նախաձեռնութիւնը ստանձնէ եւրոպայի մէջ Համաժողովի մը գումարման, ուր համախմբուին ազգին մտաւոր բարձր ուժերը, մեր յեղափոխականութեան ներկայացուցիչները, և ուր քննուի թրքահայաստանի վիճակին բարւոքման խնդիրը և գծուի ուղին, ուրկէ պէտք է ընթանայ հայ ազգի համախմբեալ բոլոր ուժերը: Այս կերպով կազմուած համաժողով մը կը հաւատանք թէ պիտի կրնայ է՛ն նպատակաւոր մար և է՛ն ապահով ուղին գծել, և թէ ազգին անտարբեր մեծամասնութիւնն ալ պարտաւորել, որ իր ուժերը տրամադրելի ընէ ազգային սրբազան գաղտին:

—Ո՞վ, ո՞ր խումբը պիտի հակառակի այս օգտակար ձեռնարկին:



ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կովկասի փոխարքան հա, եկեղեցական գոյքերու կառավարու. թեան մասին հետեւեալ «Ժամանակաւոր» կանոնները գծած է:

Ա. եկեղեցիներին պատկանող գոյքերի վերաբերմամբ

1.—Հայ-լուսաւորչական եկեղեցիներէ գոյքերի կառավարութիւնը յանձնվում է ծխական հոգաբարձութիւններին, բաղկացած երէցփոխից եւ անդամներից՝ թուով 2-4, հաւասար իրաւունքներով, որոնց ընտրութեան ծխականները իրանց միջից 3 տարով:

2.—Ծխական հոգաբարձութիւնների անդամների ընտրութիւնը կատարվում է ծխականների ընդհանուր ժողովներում ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ եւ հաստատվում է թեմական առաջնորդից:

3.—Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւունք ունեն ծրխին պատկանող արական սեռի 25 տարի հասակ ունեցող բոլոր անձերը, որոնք օրինական իրաւունք են վայելում հասարակական պարտաւորութիւնների կատարելու եւ եկեղեցու ծխականների հաշուում ոչ պակաս քան 2 տարի:

4.—Ծխական հոգաբարձութիւնների վրա պարտականութիւն է դրվում հոգ տանելու պատշաճաւոր թոյլտուութեամբ հիմնելու գաղտներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ, ապաստարաններ եւ այլ բարեգործական հաստատութիւններ:

5.—Եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու չը լինեն ծխերի բոլոր կարիքները հոգալու, հոգաբարձութիւնը առաջադրութիւն է կազմում ծխականներից որոշ տուրք նշանակելու վերաբերմամբ, այլ տուրքը կարող է լինել միանուագ կամ մշտական, դրամով կամ իրերով: Այդ առաջադրութիւնը առաջարկվում է ծխականների ընդհանուր ժողովի քննութեան եւ նրա կողմից ընդունվելուց եւ այդ մասին վճիռ կայացնելուց յետոյ դառնում պարտաւորական համաձայնութիւն յայտնողների համար:

6.—Իւրաքանչիւր տարվայ երեւումի նախահաշիւը կազմված հոգաբարձութեան կողմից՝ ստանում է ծխականների ընդհանուր ժողովի հաւանութիւնը եւ հաստատվում է թեմական առաջնորդից:

7. — Միակամ հոգաբարձութիւնները պարտաւոր են հաշիւ տալ թէ վիճակաւոր առաջնորդին եւ թէ ծխականներին ընդհանուր ժողովներին, որոնք իւրաքանչիւր տարի ընտրուած են առանձին վերստուգող յանձնաժողովներ հաշիւները ստուգելու համար :

8. — Հոգեւոր սեմինարիաներին պատկանող կաշուածներէ մասնաճիւղները (Օր. Ժող. Ժա. հ. հրատ. 1896 թ. յոգ. 1206) կառավարուած են առանձին հոգաբարձական խորհուրդներ՝ բաղկացած 12 հոգուց, նախագահութեամբ թեմական առաջնորդի :

2. — Հոգաբարձական անդամներ ընտրելու համար, թեմական առաջնորդի կամ նրա կողմից նշանակած անձի նախագահութեամբ, հրաւիրուած է վիճակային ընտրողներին ժողով՝ երկու-երկու հոգի այն քաղաքի եկեղեցիներէ, ուր գտնուած է սեմինարիան. այդ անձերը ընտրուած են ծխականներին ընդհանուր ժողովով ներկայ եղողներին ձայնների մեծամասնութեամբ եւ մի-մի հոգի վիճակում գտնուող քաղաքային եկեղեցիներէ, ընտրուած նոյն կարգով, եւ մի-մի ընտրող իւրաքանչիւր գործակալութիւնից՝ ընտրուած գիւղական եկեղեցիներին ներկայացուցիչներին ժողովով : Հոգաբարձական խորհուրդի անդամները ընտրուած են 4 տարով :

3. — Հոգաբարձական խորհուրդի անդամները հաստատուած են իրանց պաշտօնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից :

4. — Հոգաբարձական խորհուրդի անդամներին կէսը 2 տարուց յետոյ դուրս է գալիս պաշտօնից եւ առաջին անգամ վիճակով :

5. — Վիճակային ընտրողներին ժողովը, հոգաբարձական խորհուրդի լիազօրութեան ժամանակամիջոցում, ընտրուած է վերստուգող յանձնաժողով, որի կողմէն վերստուգուած հաշիւները է հիմնական Սինոդին :

6. — Տարեկան նախահաշիւները, ինչպէս նաեւ հոգաբարձական խորհուրդի հաշիւները, հաստատուած են Էմբիւսին Սինոդից :

1. — Վանքիսկիական գոյհերի կառավարութիւնը յանձնարու է վանական իշխանութեան :

2. — Վանքիսկիական գոյհերի կառավարութեան կանոնադրութեան հրաւերակը համար կարող են վրաբերել թեմական առաջնորդի կողմից եւ աշխարհական անձինք՝ օգնելու վանքական իշխանութեան :

ԱՆՔԵՐԻՔ

ՀԱՄԱԲԵՐՈՒԹԻԱՆ ՎԵՐՋԸ ԵԿԱԻ

Երանօթ յեղափոխականի մը սոյն յօդուածը անփափօս կը հրատարակենք :

Ատենէ մը 'ի վեր «Երանօթ»-ի սիւնակներ կը պարունակեն անգիտակից անհատներու համար շատ հետաքրքրական եւ սարսաղեցիկ մեկնացումներ : Այդ ամենքը եւ աւելին մեզ ծանօթ էր տարիներէ 'ի վեր ու սրտի խշիւնով մեր ձեռքով չօշափած էինք : Այս ամէնքի հրատարակումը կը մնար Դաշնակցականի մը, որպէսզի կոյր եւ կուսակցամոլ դաշնակցականներ սթափուէին եւ ժողովուրդի վրայ զգալի ազդեցութիւն մը ընէր : Վերջապէս կարեւոր դաշնակցական մը ուշացած — ազնուութիւն ունեցաւ մեզ նման շատերէ սպառնալով, որ անոր հրապարակելու յօդուածը հայ ժողովուրդին :

Գաւառի մը ուշացած — ազնուութիւն ունեցաւ մեզ նման շատերէ սպառնալով, որ անոր հրապարակելու յօդուածը հայ ժողովուրդին :

Պ. Վարդոյի անդալը եւ գործերն մեզ համար այժմեայիս չունին եւ պէտք չենք զգար սնով զբաղելու : Իսկ Կերկայիս մէջ կը ծափենք զինք սկսած մերկացումներուն համար որ բառին բովանդակ նշանակութեամբ Ազգին եւ Հայրենեաց ծառայութիւն մը ընել է :

Պ. Վարդոյի այս մերկացումները կը վերագրեն քանի մը պատճառներու :

Ա. Քանի որ տեղեկ էր այս անցողիկ ինչու մինչ օրս լռեց, Վարդոյի նման կան շատեր որ նոյն կարեւոր տեղին կը գրաւեն դաշնակցութեան մէջ : Բայց անոնց մէջէն Վարդոն միայն յանդիմանալի խղիւղ հրատարակել, նորէն ծափել է. քանի որ միւսները գետ լուռ կը մնան եւ իրենց տգործ կի զերելը կը կատարեն :

Բ. Իբր թէ Վարդոն իր գիրքն կործնեցած է դաշնակցութեան մէջ եւ ատոր վրէժն է որ կը լուծէ : Վարդոյի հրատարակած նամակներ հակառակ կը կապացուցանեն եւ թէ մինչեւ օրս պիտոն այդ տեսակ յայտարարութիւն մը չըրաւ :

Գ. Վարդոն այսչափ տարի դաշնակցութեան մէջ մնալով վատնուած գրամներուն մեղսակից է : Ենթադրենք թէ մեղսակից է. բայց ինքը այսօր խիղճ ու գութ ունեցած է այդ կեղծքան մէջ բաժին չունենալ եւ ասկից վերջ իր աշխատութեամբ ապրել : Եթէ այդպէս է նորէն գովելի է Վարդոյի ընթացքը. ինք զղջացած է իսկ միւսները կը շարունակեն իրենց քանդիլ գրութիւնը :

Դ. Վարդոյի ըսածները լոկ զրպարտութիւններ են. ասիկայ ամենապարզ եւ ամենաոչնաւարտ կոյր դաշնակցականներու այլանդակ արամբանութիւնն է. որովհետեւ Վարդոն իր ըսածներէն շատերը վաւերացուցիկ կը հաստատէ :

Այդ ոչխարամիտներ գոնէ այնչափ չեն կրնար մտածել թէ, Վարդոյի այս սոսկայի մեկնացումներու հանդէպ ինչու մինչեւ օրս Պիւսոն հերքում դուրս չը բերաւ եւ չպիտի ալ բերէ, այլ միայն Ամերիկայի եւ Եւրոպայի մանկաւարներ ինքզինքներն կը ձողապրեն խնդրոյն տարբեր գոյն տալով : Մենք շատ մօտէն կը ճանչնանք այդ պարոններ, որոնք իրենց ընթացքով ոչ թէ միայն Պիւսոյն ծառայութիւն մը կը մատուցանեն, այլ տեղի կ'ախատին իրենց դիրքն չը խախտեցնել որ յարաւերեն խեղճ ժողովուրդի գրամով հանգիստ կեանք վարել :

Մարտ չէ կարող իր ծիծաղն զգալի տեսնելով տեղույս կարգ մը սպուշ դաշնակցականները որ մերկացումն առաջ Վարդոն իր աստուած կը պաշտէին, իսկ այժմ կատաղի եւ ողորկ կայր հակառակորդ եւ հայհոյողներ գործած են. չիտակը այդպիսիներու վիճակին փոխանակ ծիծաղելու արգահատելու է. եւ աշխատելու է այդպիսիներ զգաստացնելու որ գոնէ իբր մարդ խորհին եւ տրամաբանին. մեղք են :

Ինչպէս ըսինք Պ. Վարդոյի այս ընթացքը ծափելի է. պէտք է հաստատութեան ունենալ շարունակելու, պէտք է գիտնալ որ ժողովուրդի անկեղծ եւ գիտակից դատարարներ Էմանուէլութիւնը միայն այս միջոցաւ պիտի կրնայ չափել :

Կարգ մը խելզ դաշնակցականներ կը արամբանեն թէ, Պիւսոն կարեւորութիւն չպիտի տայ Վարդոյի

գրածներուն. այս տեսակ զրարանութիւններ պիտի լսէք նուա՛ն Ծրանատի, Ամերիկայի, Եւրոպայի, Կովկասի եւ թերեւս երկրի մէջ. որովհետեւ պիւսոյականներ իրենց մանկաւարիներ ունին յիշեալ երկրներու մէջ եւ ատենք իբր ներկայացուցիչ պարզ տէրէպէկներ են. իրենք ճշիւ եւ հանգիստ լուծաք ալ ընտանիքով՝ ապրելով վերջ միայն աւելցած դրամներ պիւսոն կը զրկեն. ուրեմն երբ Վարդոյի հրապարակելուն իրենց հանգիստ կեանքն պիտի խանգարի եւ ինչու այդպէս ինքն Վարդոն կատաղի հակառակորդ չը հանգիստանա :

Ես նպատակ չունէի այսչափ խոր խափանել ինքզին. բայց այսօր պարզապէս խիղճս գին կը տանջէ ըսելով «այ հեղի՛ հաւաքեալներս վերջը եկաւ» : Պարզապէս կուգեմ իբր անհաւաք մը եւ յեղափոխական մը ինձ ընկած քա՛մին ծառայութիւն մատուցանել հայ ժողովուրդին. եւ թէ՛ ընես արձագանք ըլլալ Վարդոյին. որպէսզի կարգ մը ոչխարամիտ դաշնակցականներ իրենց անկեղծութեամբ զուր տեղ իրենց լուծումներ խնայեն, այլեւս չը կարեն թէ նպատակին կը գործածուի, եւ չէզոք ժողովուրդը բացայայտ կերպով տեսնէ թէ, ինչ տեսակ տգործներն եւ բաղդախիւրներն են իրեն գատ պաշտպանողներն եւ զինքը ազատողներն :

Վարդոյի ըսածներ ճիշդ է. տարին էրէ ի վեր է որ դաշնակցութիւնն ոչ թէ ապակեղբոնացման եւ կեղբոնացման սխալմով կը վարէ իր գործեր՝ այլ պարզապէս խնամակեան եւ քահանայութեան ձեռով. պիւսոյն զուր այն գործիչներ որոնք վարժ են շահագործութեան եւ բաղդախիւրութեան եւ իրենք յօժար են մինչեւ վերջ պիւսոններու ձեռք կոյր գործիք մնալ. այդպիսիներու կը տրուի պաշտօն մը եւ կ'որոշուի սահման մը ներկայացուցիչ անուան տակ :

Կ. Կոմիտէներ ըսելով իրենց իշխանութեան ներքեւ են ուղեւորներ պէս կը կառավարեն եւ ուղած ժամանակներն պիւսոն պէտք եղած հրահանգներ կը բերեն, խեղճ եւ միամիտ կոմիտէներու անդամներուն կը իրենց տալու համար, որպէսզի իրենց հանգիստն չը վրդովուի եւ սկսած սխալմէն շարունակուի : Քանի որ դաշնակցականներ տեղի ունեցած զեղծումներու մասին ճարտարաւարտ բողոքած են պիւսոյին, իսկ պիւսոն որ լուռ կը ճանչնայ իր մանկաւարի եւ գիտէ բողոքի արդաւարտ ըլլալն ալ, ինքզինքն կը յանձնարարէ ներկայացուցիչն որ արդէն զեղծմանարարն է, թող բողոքն կրկնուի եւ շարունակուի պիւսոյին փոխը չէ ձայն բարբառող անապատի կը մնայ, կամ վերջի վերջոյ այդ յամու քննադատութիւն եւ բողոքողին պատրաստ է մատնել եւ դաւաճան անուն, անոր համար պատրաստ է լանգուզ տէրութիւն. հարկ չկայ կերեկցիկեաններէն՝ Արտէն վարդապետներէ եւ տէր Կոմիտաս քահանայներէն ուրիշ շատ մը գոհնուած անուններ հոս յիշել :

Հարեւոյններ ըսելով գրամ ատենին նորէն ներկայացուցիչներու որոշումն է, եւ երբեմն պիւսոն այդ որոշումը կը վաւերացնէ ի շահս իրեն, որովհետեւ առնուած դրամներ թէ ներկայացուցիչի ծախքն աւելնայ պիւսոն կերթայ : Անդուզական բարեբար ժամհարանցի սպանու-

թենէն այնչափ պիւսոն չօգտուեցաւ որչափ որ օգտուեցաւ սպանութիւն կատարել տուողն, որ այժմ տարբեր կըլծայի տակ հանգիստ կեանք կը վարէ ընտանեօք, այն վատ խելզն կը ձգնի ժողովուրդին հաւատացնել թէ, իր ունեցած անշահ եւ աչքի թօղ փշիւրք արհեստովն է որ այդքան ճիշտ կապրի :

Անմոռանալի զօրադր Ունեւանի մասին այժմ չեմ ուզեր երկար գրել, քանի որ դեռ չ'ստուգուեցաւ, թէ դաշնակցականներու գործն է. որովհետեւ քանիցս ատիժ ունեցած եմ իրեն հետ տեսնուելու, ինքք ընաւ պատճառ մը չունէր, պարծեւալու. ծածկելու եւ մեզ խաբելու, մանաւանդ որ մեր տեսակցութեան ներկայ կը գտնուէր հայութեան ամենաբարձր ամենապարզելի անձ մը, Ունեւանի շատ դրժներ հրապարակի վրայ են եւ Ունեւան մը սպաննել գրամի համար, ասկից աւելի ստորութիւն եւ դաւաճանութիւն կըլլայ :

Չեմ գիտեր հարկ կա՞յ այնչափ յառաջ երթալու եւ բացարձակապէս ըսելու թէ, պիւսոն ժողովուրդէն դուրս քաշելու համար ստեղծեցին Կոմիտէներ, Պիւսոյ Օթոմանի անմիտ արշաւանքն եւ ցոյցն եւ Սասնոյ ապստամբութիւն «կը գործենք», Դաշնակցութիւն կը գործէ » անուն տալու լուծել ժողովուրդի մէջ : Այս ամէնուն պղտոր ջուրն մէջ ձուկ որսալ եւ ժողովուրդէն դուրս կերպով դրամ կորցել անուն պիտի տանք :

Բացի կոյր ու մոլեռանդ դաշնակցականներէ ո՞վ է որ կը յանդիման մեր ըսածներ հերքելու, մեր թուածներու բարոյական ու ինքնական կորուստն անչափ է եւ սոսկայի, իսկ արդիւնքն զէքս եւ զէքս : Ինչ միջ պիւսոյականներն այնչափ ողջ են յիմար էին որ չ'ունեցան այնչափ հեռատեսութիւն. չէ՛, մեր կարծածն աւելին ունէին, բայց իրենց հանգիստն... Կեանք վարելուն մէջ կը կայանար իրենց հոգն. ինչ փոքր իրենց ժողովուրդ կը ջարդուէր, կը կողոպտուէր, վանքեր եկեղեցիներ կը պղծուէին, գիւղեր քարուքարէն կըլլար կայրեր մոլորակները կը դառնար, օղջ մնացողներ կը մուրային եւ ստիպեալ կորուստիս կըլլային : Ինչու չընէին այս բաղդախիւրի դաւաճաններ, քանի որ իրենց լաւ ծանօթ էր հայ ժողովուրդի գիտակցութեան եւ ինչպէս չ'անհաճուէին դուրս ըլլալը, եւ քանի որ իրենք կրնային դիւրութեամբ իրենց գործիք ընել անկեղծ անձերն ուէր Սերոբներն եւ Անդրանիկներն, եւ այսպէսով ժողովուրդը կեղեքել :

Չեմ գիտեր թէ հայ ժողովուրդ այլ եւս լսելու եւ զգալու ու սթափուելու պէտք ունի՞ :

Ինչպէս կը տեսնենք Վարդոյի գրածներուն արձագանքներ հետզհետէ կը հասնին, այդ կէտը շատ ուրախալի է. եւ պէտք է ճշմարիտ եւ անկեղծ հայ հայրենասէրը ոյժ տայ Վարդոններ. պէտք է աջակցի. որպէսզի միանգամ ընդ միշտ մաքուագործում տիրէ յեղափոխական ասպարէզին եւ այդ մաքուագործումէն վերջն է որ ընդհ. միութեան կամ համերաշխութեան խնդիրն կը դիւրանայ : Անկեղծ եւ անչափանդիւր դաշնակցականներ պէտք է ոյժ տան Վարդոյին քան թէ չէզոք ժողովուրդ, որովհետեւ դաշնակցականներու եւ ժողովուրդի ազդեցութիւն շատ կը տարբերի : Այլեւս զուր է արդի պիւսոյականներէ ազդին եւ հայրենեաց օգուտ մը սպասել. որովհետեւ յստակ կերպով ան-

նուեցաւ թէ, ատոնք միայն իրենց ապ-
քուստին եւ հանգիստ կեանք վարե-
լուն կ'աշխատին քան թէ Ազգին եւ
Գործին : Այդ պիւռնակներուն ինչ
անուն տալը կը թողուի ոչխարաւոր եւ
ապուշ դաշնակցականներուն :

Վարդոյն Եյժ տալ եւ ապակցիւնդգին
եւ ժողովուրդին մեծ ծառայութիւն մը
ընել ըսելէ, որովհետեւ Վարդոն որ իր
քով սոսկալի տօքի մանկեր ունի ա-
տոնցով շատ գիւրտութեամբ կ'աքողէ
ընդէ. ժողովին արմատախիլ ընել տրդի
պիւռնակներն, իսկ եթէ պիւռնակն-
ներ յիմարութիւն ունենան գաշակ-
ցութեան ընդ. ժողովոյ որոշումներ չը
յարդել եւ հակառակիլ, եւ կարծեմ թէ,
ինչպէս օրինակներ տեսնուած է. դաշ-
նակցութեան եւ չէզոք դասակարգի մէջ
կը գտնուին անձնուէր եւ անձնագործ
անհասներ, որոնք պահանջել հար-
կին . . . ցոյցին արդի պիւռնակներն-
բու ատաջ եւ ըսին, Այ հերիք հարե-
քութեան վերջն եկաւ :

ԱՃՈՏ

ՄՏՔԵՐ ԵՒ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Գովասանք ծովի կը նմանի,
ու ամէն ծովի կը պարտէ աչքերը .
(Վօրդեր)

Քաղաքակրթութեան գլխաւոր
չարիքը հայրենիք խօսքի ջնջման մէջ է :
(Վալսուր)

Ներկայի սխալանքներուն ամե-
նալու թողութիւն տուողը դարձեալ
անցեալն է .
(Լըմէս)

Ժամանակակից գրականութեան
գաւերէն մէկն ալ կեղծ ճշմարտն է :
(Է. Լըգուլի)

Զօրեղները նուաճեցին աշխար-
հը, խաղաղասէրները կը պահպանեն :
(Վալսուր)

Որ եւ է վարդապետութեան
ճշմարտութիւնը նոյն վարդապետու-
թեան զաւանդներու թիւի շատութենէ
կախուած չէ, Բուդիստները հինգ հա-
րիւր միլիոն են, սակայն այս չը նը-
շանակէր թէ բողոքայականութիւնը
մի ճշմարտ կրօնք է :
(Իվ. Դիլի)

Մի ազգ չը մեռնիր խոստովա-
նելով իր ըրած սխալը, այլ կը մեռնի
կանխադանայ, եթէ կանգնէ նոյն սխա-
լունքը կրկնելով :
(Ալֆ. Դիլի)

Աղքատներու պարգարանքը ա-
ւելի ցաւ կազդէ մարդու որչափ
անոնց թշուառութիւնը :
(Վեթերին)

Ամէն մարդ կը ցանկայ երկար
ապրիլ քայլ ձերանայ ոչ ոք կուզէ :
(Սվիֆթ)

Որչափ աւելի մի ժողովուրդ իր
մէջ կը պարունակէ աւանակներ,
նոյնքան ալ աւելի այդ ժողովուրդը
ենթարկուած է հարուածներ ստանա-
լու :
(Բոլ Ֆուլք)

Իրաքանչիւր ազգ իրեն արժանի
լրագրներն ունի :
(Տիեր)

Զարամիտ մարդոց եւ կաղմա-
կերպութեանց հրութիւն պէտք է
մաղթել, իսկ յիմարներու լուռ-
թիւն :
(Շամֆոր)

Կան ժամանակի շրջաններ, երբ
հասարակաց կարծիքը ըսուած բանը
ամենավատ կարծիքն է :

Նոյն

Մաղկաֆադ
Ա. Ս.
(Թ. Փազար)

Մ Ր Զ Ի Ի Ն Ը Ի Բ Բ Ե Ի Դ Ե Ղ

Նախնիք ճմուռած մըջիւններ կը
գործածէին իբրեւ գեղ, մասնաւո-
րապէս անդամալուծութեան համար :
Գիւղացիները տեղ տեղ մըջնոց բոյնի
մը մէջ կը մեկնէին պարզապէս ան-
զամալոյժ անգամը : Գիւղացիները մէջ
սովորական լողանքներու առթիւ
կը գործածուին մըջիւններն իբրեւ
զարման անգամալուծութեան, յողա-
ցութեան (լուծութիւն) ու կաթ-
ուածի :

Այս իրողութենէն դրշուած կարգ
մը փորձեր կատարեց Պ. Բլէմէնտ
մըջնակն թթուտով եւ այն եղա-
կացութեան հասած է թէ խիստ կա-
րեւոր գեղ մըն է մըջիւնէն հանուած
այս թթուտը : Դուրսէն գործածուե-
լով բաւական կը զօրացնէ մարդու
մկանական ոյժը եւ կ'աւելցնէ յոգ-
նութեան դիմաւորելու կարողութիւն-
ը : Այս խուզարկին ըսածին նա-
յիլով յոգնութեան զգացումը, որ առ-
տուն արթննալու ատեն կը զգայ
մարդ իր նախորդ օրուան մէկ ան-
սովոր աշխատանքէն կամ մարզան-
քէն, կանխատեսայ շուտով երբ մըջ-
նական թթուտ քառի յոգնած ան-
դամներուն վրայ : Դարձեալ 22 տա-
րեկան երիտասարդի մը վրայ փոր-
ձեր կատարելով գտաւ Պ. Բլէմէնտ
թէ, մըջնական թթուտը գործածու-
թեան շնորհիւ այս երիտասարդը կը
կտրողանար սովորականէն հինգ ան-
գամ աւելի ծանր եւ երկարատեւ
գործեր կատարել : Զկայ ուրիշ ծա-
նոթ նիւթ մը որ ասոր չափ ոյժ
կարող ըլլայ հայթայթել մարմնական
գրութեան :

Բլէմէնտի այս փորձարկութեանց
եւ անոնց արդիւններուն հրապա-
րակութենէն դրշուած Պ. Լ. Կլէրիկէ հր-
ատարակեց մըջիւնի իրեւ գեղ
ունեցած արժէքին մասին իր երեւան
ընթաց կարգ մը իրողութիւններն :
Ինքը՝ նատրոնի ու կրի մըջնատ-
ներ գործածեց փոխանակ թթուտի
Այս լուծումները նախ ներարկեց
նապաստակներու երակաց եւ մարմ-
նայ հիւստածներուն մէջ : Տեսնելով
որ նապաստակին ոչ մէկ վնաս կը
պատճառէին մըջնոց հիւթէն պատ-
րաստուած այս լուծումներն, չի վա-
րանցաւ իր իսկ մարմնոյն վրայ
փորձել անոնց ազդեցութիւնը : Շու-
տով տեսաւ անոնց յառաջ բերած
բարեւար ազդեցութիւններն : Մե-
ծապէս աճեցաւ իր տիրութեան ինչ-
պէս նաեւ Փիզիքական եւ ուղե-
ղային աշխատութեանց դիմաւորու-
թիւ կարողութիւնը :

Երբ նատրոնի մըջնատ խմէ մէ-
կը՝ աւելի կորովի կը զգայ ինք-
զինք, իր խորհուրդները աւելի կը
պայծառանան, աւելի լուր քուէն կու-
նենայ դիչերներն, եւ իր արտօժա-
կը կը բացուի :

Վերջերս Փրօֆ. Հուշարտ ուսում-
նասիրութիւն մը ներկայացուց Ֆը-
րանսայի Բժշկական Ակադէմիային,
որ կուգայ հաստատել նախորդ փոր-
ձարկներու եզրակացութիւններն :
Տարբեր անձերու եւ իր իսկ վրայ
փորձարկելով գրեթէ նոյն արդիւնք-

ներն ստացաւ Փրօֆ. Հուշարտ ամէն
պարագայի տակ : Իր վրայ կատա-
րած փորձերուն ակնարկելով կ'ըսէ
յիշեալը թէ, զեռ մըջնական թթուտ
չի խմած ուժաշափ գործիքի մը
վրայ 9.500 քիլոկրամէթր կարող ե-
ղաւ շարժել նշանացոյցը : Յետոյ,
առաջին օրը, 2 կրամ թթուտ խմեց,
բայց 8.750 քիլոկրամէթր միայն կըր-
ցաւ շարժել . երկրորդ օրը նոյն
քանակութեամբ խմեց, եւ այս ան-
գամ 20.625 քիլոկրամէթր շար-
ժեց նշանացոյցը . երրորդ օրը 4
կրամ ստաւ եւ 20.975 քիլոկրա-
մէթր կըրցաւ շարժել, չորրորդ օրը
4 կրամ եւ 20.210 քիլոկրամէթր.
հինգերորդ օրն 3 կրամ, ու 30.650
քիլոկրամէթր շարժեց նշանացոյցը :
Այսպէս, 5 օրուան մէջ 8.750 քիլո-
կրամէթրէն մինչեւ 30.650 քիլո-
կրամէթր աճեցաւ իր մկանական
ոյժը եւ նոյն միջոցին 15 կրամ
մըջնական թթուտ մտած էր իր
մարմնոյն մէջ. ըսել է քառապատ-
կուած էր իր մարմնական ոյժը : Յե-
տոյ, Փրօֆ. Հուշարտ ձգեց այս գե-
ղին գործածութիւնը, որով իր Ֆի-
զիքական ոյժը ալ սկսաւ նուազել
օրէ օր : Առաջին երկու օրերն 30 էն
19 եւ 18 քիլոկրամէթրներու իջաւ,
յաջորդ երեք օրերուն մէջ 14 ի եւ
17 ի մէջտեղերը տարուբերեցաւ : Աս-
կից կը տեսնուի թէ պատրական
երեւոյթ մը չէր իր Ֆիզիքական
ուժին աւելնալը մըջնական թթուտի
ազդեցութեամբ, եւ թէ ուժի ասոյժ
յաւելում մը կը մնար տեղը վեր-
ջապէս : Ուրիշ անձերու վրայ կա-
տարուած փորձեր եւս նոյն իրողու-
թիւնը կը հաստատեն :

Փրօֆ. Հուշարտ փորձեր կատարեց
նաեւ ջրային կերպ կերպ տկարու-
թեանց, շաքարաւորութեան, չնչար-
գելութեան, սրտի ու ստամոքսային
հիւանդութեանց, սեռային տկարու-
թեան եւ ուրիշ անբարեւ երեւոյթ-
կուծ մարդոց վրայ խիստ գոհա-
ցուցիչ արդիւնքներով :

Նատրոնի մըջնատը թունաւոր
նիւթ մը չըլլալով կրնայ ապահովա-
բար գործածուիլ : Իրարու խառնէ
նարնջի կեղեւներէն պատրաստուած
20 կրամ անուշեղէն եւ 10 կրամ
նատրոնի մըջնատ, եւ կուեննաս ըմ-
պելիք մը՝ որմէ օրը երեք չորս գը-
ղալ խմելով ոյժը եւ առողջութիւն-
ը կրնայ աւելցնել :

Ժամանակաւ մարդիկ սովոր էին
ըսել. «Ո՛վ ծոյլ, մըջիւնին գնա» :
Ասկից վերջը կ'երեւի պիտի ըսեն
«Ո՛վ ծոյլ, մըջիւն կեր, եւ պիտի ըս-
տանաս անոր քաջութիւնը, անոր
դիմացկունութիւնը եւ» — զի զիտէ—
թերեւս նաեւ անոր անտեսական ո-
գին :
(ԼՈՅՍ)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Տփղիսի մէջ օգոստ. 11 ին լուր
տարածուած է թէ Շուշի գաւա-
ռին մէջ թուրքերը հայերու
վրայ յարձակում ըրած եւ արիւ-
նահեղ ընդհարումներ տեղի ու-
նեցած են : Առաջնորդը հետեւե-
ալը հեռագրած է Կաթողիկո-
սին :

«Բազմահազար մահմեդական հեծ-
եալներ շարժեցին իրանի վրայ, ուր,
ինչպէս ասուած են, կոտորած է հա-
յերի եւ թուրքերի մէջ : Այդ մասին
եւ հաղորդեցի Կովկասի Փոխաբքայի

օգնական Մալամային, ինչդրելով շու-
տափոյթ ձեռնարկել միջոցների՝ կո-
տորածը զաղրեցնելու » :

Աշոտ եպիսկոպոս

Տփղիսի քաղաքապետին եւ
հեռագրուած է թէ 3000 թուրք
ձիաւորներ զինուած հաւաք-
ուեր են Աղդուսի մէջ, եւ Շուշի
քաղաքին մէջ սպանութիւններ
կատարուած են. անմիջական օգ-
նութիւն ուղուած է :

Նոյն թերթի օգոստոս 13 ի
թիւին մէջ կը կարդանք Շուշու
գաւառապետի հետեւեալ հեռա-
գիրը :

«Զիմանչիւրի գաւառում տեղի ու-
նեցաւ մի փոքրիկ ընդհարում հա-
յերի եւ սարիք վերադարձող թուրք-
քերի միջեւ : Չափազանց քիչ թուրքեր
սաստիկ յուզել են մտքերը : Շուշ-
վայ խճուղու վրա կանգնեցին են մի
քանի օմնիբուսներ : Բռնութիւններ
չեն եղել, բոլոր ճամբորդները լիապէս
ապահով են եւ գտնուում են ուստի-
կանութեան պաշտպանութեան տակ :

—Տփղիսի կայարանին մէջ
հրացանի գնդակով մը սպաննը-
ւած է օգոստ. 11 ին կայարանա-
պետ Տ. Պիւլուսթին : Նոյն օրը
ատրճանակի հարուածներով քա-
ղաքին մէջ սպաննուած է իվան
Նիկուլին : Ոճրագործները փա-
խած են :

Երեւանի պ. նահանգապետից այսօր
թոյլտուութիւն ստացաւ պ. Ս. Տէր-
Գեորգեանը երկու վազօն իրեր տա-
նելու Նախիջևանի անկարգութիւն-
ներից վնասված հայ ժողովրդի օգուտին :
Իրերը նուիրված են Ղաֆարլու գիւ-
ղի չըջանից վազօններին առաջնորդու-
մ են պ. պ. Ս. Տէր-Գեորգեան, Խ. Տէր-
Վարդանեան, Ս. Վարդանեան, Վ. Բա-
բայանեան եւ Պ. Գապարեան : Անց-
եալ օրը Դավալուից դէպի Ղամար-
լու տանող արքունական ճանապար-
հի վրա, Թրքախակի Բիչիկ վիտի գիւ-
ղի սահմանում թուրքերը յարձակ-
վում են 9 հայ բանուորի վրա, ո-
րոնցից 6-ին աջողվում է փախչել,
իսկ 3-ին անյայտացնում են : Բա-
նուորները Սլէքսանդրօպոլիս քանակչներ
են : Թուրքերը նոյն Բիչիկ վիտի
գիւղացիք են, որ մի քանի օր
առաջ անյայտացրին եւ մի քանիս
երկու անձնաւորութեան հետ միասին
Ցանկայի է կառավարութեան կողմից
միջոցներ ձեռք առնվել, որպէսզի
անց ու դարձ անող ժողովուրդը ազատ
մնայ բարբարոսական յարձակումներից :
—Նոր-Բայազէտի գաւառում, ինչ-
պէս հաղորդում են հաւատարմաբար-
ներից, հայերի գրութիւնը ներկայու-
մըս նախանձելի չէ, ի նկատի ունե-
նալով այն երկիւղը, որ տիրում է
նրանց մէջ : Այնտեղ հայալեզուներից
սկսել են վերադառնալ քրդերը եւ
թուրքերը, որոնք ճանապարհին քը-
չում եւ տանում են հայերի աւաւանե-
րը : Գաւառապետ Ղարդանեանը լուրջ
ուշադրութիւն է դարձնում հայերի
գրութեան վնաս եւ աշխատում է մի-
ջոցներ ձեռք առնել ապագայ օր եւ
է թիւրիմացութեան առաջն առնե-
լու :

—Թաթարից գրում են. «Սուրից
վայր իջնող թուրքերի եւ հայերի միջեւ
«Իստիսու» տեղում, արօտատեղի ա-
ռիթով ընդհարում տեղի ունեցաւ :
Կան սպանվածներ : Ուղարկուած է
մի հարիւրեակ կազակ » :

ՀԱՄԼԵԹ

Մանգո օղորդող Տ. Կ. Գալֆանան
պատրաստած է հմէկ քանի պո-
տաններու եւ աղջիկներու
մասնակցութեամբ « ՀԱՄԼԵԹ » ք-

Տ. Կ. Գալֆանան՝ իբր արուեստա-
գէտ իր անուան շուրջ ելած ազմուկ-
ներով մեր ընթերցողները արդէն
իբրով հետաքրքրած ըլլալով, կը
յուսանք թէ հանդիսատեսներու հոծ
բազմութիւն մը պիտի ունենայ :

Տոմարները այսօրուրէն կը ծախ-
ուին ժամը 4-6 « Սասուն » արձարա-
նք, իսկ ներկայացման օրը « Պուլկա-
քի » թատերասրահին դուռը :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԳԻԱ

Էտիրնէտէն ալընան թէլէկը-
րաֆլար վէ չըմէնտըֆէրէ կէլէն
եօլըլար էտիրնէ շէհրինին ա-
լէֆլէր իշինտէ եանմագտա օլ-
աղընը պիտիբիօրլար : Եան-
կըն Գալէ-Գաբուսընտան պաշ-
լամըլ տըր : Բուս գօնսօլոսհա-
նէսի եանտըգտան սօնրա՝ պիւ-
թիւն մահալլէր՝ Մարիցա նէհ-
րինէ գատար՝ եանմըլ տըրլար :
Եանան պինալարըն մըգտարը
2500 խանէ կէսթէրիօրլար :
Եանի թահթագալէ թագիր օլը-
նան պիւթիւն խրիսթիան մա-
հէլլէսի, պուլկար վէ բուս մէթ-
բաբօլիտ տաիւրէլէրի, պիւր էր-
մէնի քիլիսէսի, 20 եանուտի
սինակօկարը. պուլկար կիմնա-
ղիսը վէ ասքէր գաղարմալարը
Նիհայէթ պինլէրճէ քիշիլէր
էվսիդ վէ մէսքեանսըղգալմըլար :

Տըմէվնիկ ին պէյանը իւզրէ,
տիկէր պիւր թէլէկրաֆ էտիրնէ
շէհրինի եագանլար թիւրքլէր
օլաղընը վէ մագսէտլէրի խրիս-
թիանլարըն վիճուտին գալտըր-
մագտան իպարէթ իտիկինի
պիտիբիօր իմիշ :

— Սթանպուլտա րէսմէն պիւ-
տիբիլիկի իւզրէ, թիւրք ասքէր-
լէրի ֆիթուսթլէ Սէնապա կիր-
միշէր :

— Եունան բրէնսի Նիքօլա ըՍ-
թանպուլ կիթմիշ օլուպ, Սուլ-
թանըն սէրալընա տալթէ օլըն-
մըլ վէ ալըն 21 ինտէ Սթան-
պուլտան մուֆարէթէ իթմիշ
տիր :

— Սէրէգտէքի Եունան գօնսօ-
լաղ զէնլին պուլկարլարա թէհ-
տիտաթլը մէքթուպլար եօլլա-
յուպ, անլէրին Բուս գալտ օլըն-
մալարընը թալէպ իթմէքտէ ի-
միշ, Կէլէն սէնէ Բուս գալտ օ-
լընան պուլկարլարը թէքրար
պուլկարգալտ իթտիրմէքտէ օլան
Կէօրիկի թիմլու Բուսլարտան
գաթլ օլընմըլ :

— Իզմիրտէ Գուէտի-Լիօնէ պան-
գաթընտա էմանէթ պուլընան
գաթըլարտան 62 քիլօ տինամիթ

պուլընմըլ տըր :
— Թանըն Սթանպուլ մուլպի-
րի Գալտէրիտէ գըրկըն վուգու
պուլմասընըն հալատիսինի թէք-
ղիպ իտէյօր :

ԲՈՒՍԻԱ

Մ Ի Ի Ս Ա Լ Է Հ Ա

Բօրթամութտա իմզալանմագ
հալինտէ օլան սուլհ մուգալէ-
լէսի Բէթրսպուրկտա ֆէվգէլա-
տէ մէսէրրէթ հասըլ իթմիշ
տիր : Սախալին աուսընըն եա-
րըսը Բուսիայա գալաճագ իտէ-
տէ հէր իքի թարաֆըն աուա-
յը գալիլէշտիւմէկէ հագգը օլ-
մայաճագ տըր : Թաղմինաթ նա-
մը իլէ Բուսիա տօղրոտան պիւր
շէյ էօտէմէյէճէք : Փագաթ 2ին-
տէքի չարգ չըմէնտըֆէրի 500,
միլիոն ֆրանկա Բուսլարա մալ
օլմուշ քիքէն ճարօնա թէքը ի-
տիլէճէք տիր : քէչա եէսիւր
տիւշմիւշ օլան 80,000 բուս աս-
քէրլէրինէ մէսարիֆ նամը իլէ
պէօյիւկ պիւր մէպաղ Բուսիա
ճարօնա էօտէյէճէք տիր :

Պուլկարտան մաատա տէնիդ-
տէ պաթըրըլմըլ օլան բուս
վաբօրլարը սու եիւզինէ չըգա-
րըլմագտա օլաղըր կիպի՝ ճարօն-
լար էլինէ եէսիւր տիւշէն տի-
կէր Բուս վաբօրլար, թօրլար,
թիւֆէնկլէր, ճէպհանէ վէ սա-
իւրէ ճարօնա գալաճագլար տըր :

Կ Ա Վ Կ Ա Ո Ի Ա

Կովկասիանըն Շուշի շէհրին-
տէ սօն կիւնլէրտէ վուգու պու-
լան գարըլըղըլտան տօլայը
օգոստոս 21 թարիլլէ Բէթէրս-
պուրկտան վէրիլէն պիւր թէ-
լէկրաֆ պէր վէճհի աթի պիւ-
տիրիօր :

« Շուշինին էրմէնիլէրի քէն-
տի մահէլլէրինտէ պուլընան
միւսլիմանլար իւզէրինէ հիւ-
ճուս իտուպ անլէրի գըրմըլ-
լար վէ 40 խանէ եագմըլար :
Եիւզ քիշի գատար միւսլիմանլար
էրմէնիլէրի թէսքին վէ գըր-
կընը մէնն իթմէք իշին էր-
մէնի մահէլլէսինէ կիրմիշէր :
Փագաթ օնլարտան չօղարը եա-
րէլէնմիշէր վէ պաղըլարը եէ-
սիւր թուլթուլմուշլար : Եիւզաքէ-
թուբօլ միւթէսարըքը Շուշիյէ
կիթմիշ օլարագ էրմէնիլէրտէն
եարէլէնմիշ տիր :

« Միւսլիմանլար էրմէնիլէր-
տէն ալըլը օլաղըլարընտան
ճիւղար քէօյլէրտէն իմտատ իս-
թէմիշէր, վէ թէքրար էրմէ-
նիլէրին իւզէրինէ հիւճուս իթ-
միշէր : Գըրկըն վէ եանկընլար
տէվամ իթմէքտէ տիրլէր : »

Իշպու թէլէկրաֆ իլք տէֆա
էրմէնիլէրին հիւճուսընը պիւ-
տիրիօր : Փագաթ էրմէնիլէրին
պու հիւճուսընէ՝ սէպէպտէն ի-

լէրի կէլմիշ օլաղընը եագմայօր,
եայլարտան կէրի տէօնէն
Բիւրտլէր վէ թիւրքլէր 3000
աթլը Շուշի գաղասընըն էրմէ-
նի քէօյլէրինի պօղմագտա վէ
շէհրի տախի թէհտիտ իթմէք-
տէ օլաղըլարը տահա էվլէլ ա-
լընան հալատիսլէրլէ թաստիդ
օլընմըլ տըր : Բէթէրսպուրկտան
վէրիլէն եօգարաաքի թէլէքրաֆ
պու նօգթայը սէթր իտէյօր վէ
իլք հիւճուս էրմէնիլէրտէն օլ-
աղընը կէսթէրմէք իսթէյօր :

Բ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Սուլինատան պիզէ եաղըլտը-
ղը իւզրէ, օրանըն թիւրք վէ
էրմէնի իշճիլէրի պէյնինտէ
թէքրար խուսուսթէթ հասըլ օլ-
մուշ իսէտէ շիմտիլիք միւսատէ-
մէ վուգու պուլմամըլ տըր : Մա-
հէլլէն թիւրք գօնսօլոսը ճահիլ
համալլարըն թէսսուպուր թահ-
րիդ իթմէքտէ կէօրիւնիօր :

Բուսէն հիւքիւմէթի Սուլի-
նատա էրմէնիլէրին տիւքեան վէ
էվլէրինի եօգլամըլ վէ չօղարը
թէվգըֆ իտուպ իսթինթագ իթ-
միշ իսէտէ միւզիւր հիշ պիւր շէյ
պուլմամըլ տըր : Թէվգըֆ օլը-
նանլար տախի՝ էն ասըլ Պիթ-
լիսի վէ Բուսիա թապասը
Մ. Արփիար Մարգարեանըն զայ-
րէթ վէ թէէսիւրի իլէ սէրպէսթ
պըրագըլմըլար տըր :

— Պուգրէշտէ նէշը օլընան
Բաքրիս նամ բուս կաղէթասը-
նըն տիրէքթօրը, մուհարրիւրի
վէ մէսուլը, 3 քիշի, Բուսիա իա-
տան իւրաճ օլընմըլար տըր :
— Մաքէթոնիտա բուս շէթալարը
Գուցօ-վալաքլարա գարըլ իճրա
իթտիքլէրի զատտարըղըլտան
տօլայը Պուգրէշտէ միթինկ օլ-
մուշ տըր : Բաքրիս ին մուհար-
րիւրլէրի իսէ միթինկէ գարըլ
պիւր նիւմայիշ օլմագ իւզրէ՝
« Մաքէթոնիա եալընըղ Բուս-
լարըն օլաճագ » Եօլլու րէսիմ-
լէր պասուպ, պիւթիւն բուս
տիւքեանլարըն տաղըլթմըլար,
պուլնլար տախի տուվարլարընա
ասմըլար : Բուսէն էհալիսի
Բուսլարըն պու հարէքէթինէ
թահամմիւլ իթմէյուպ, ճէպրէն
մէշքիւր րէսիմլէրի գալտըր-
մագ իսթմիշ վէ պու սուրէթլէ
Կապրօմանի վէ Բահօլի սօգագ-
լարընտա գալկալար վէ բրօ-
թէսթլէր վուգու պուլմուշ տըր :
Վիւքէլա մէճիսի պու վագալը
պէհանէ իտէրէք Բաքրիս ին
մուհարրիւրլէրինի իւրաճ ի-
տուպտէ՝ մէշքիւր կաղէթայը
գալաթմըլ օլմագ բուսէն բօլի
թիգասընա միւնասիպ կէօրմիւշ
տիր :

Ճըրճօվտան տախի պաղը Եու-
նան թապասը օլան Բուսլարըն
սիւրիւլմէրինի պիտիբիօրլար :
Շու հալտէ Բուսլարըն Մաքէ-
թոնիտա աբաղըլարընա մու-

գապիլ Բուսէն հիւքիւմէթի տա-
խի Բուսիա իտա եագմայա գալ-
գըլմըլ տէյէճէյիդ, ծագաթ Սու-
լինատաքի պիզիմ էրմէնիլէր-
տէն քիմիշ զարէքինի չըգար-
մագ իսթէյօրլար :

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Է

Թիէնցիտէն Թիպիլնա կա-
ղէթասընա իշար օլընտըղնա
նագարէն ճարօնիտա իսթի-
լալ զուհուր իթմիշ :

— Ալմանիանըն համպուրկ շէհ-
րինտէ գօլէրա իլլէթի պաշ
կէսթէրմիշ օլաղընը էվրօբա
կաղէթալարը եաղիյօրլար : Դէ-
չա Բուսիայա սինօրտալ օլան
Կալիցիա էյալէթինտէ 43 քի-
շի գօլէրայա թուլթուլմուշլար :

Իշպու տէհէթլի խասթալըգ
Մանչուրիատան ալտէթ իտէն
ասքէրլէր վասիթասը իլէ Բու-
սիայա կիւրմիշ վէ օրատան Ալ-
մանիայա կէլմիշ զանն օլընը-
յօր :

Պէրլինտէն վէրիլէն թէլէկրաֆ
Բրուսիանըն զարպ գըսմընտա
վէ Բողէնտէ գօլէլա եայրըլմըլ
օլաղընը պիտիբիօր :

ԹԻԻՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ,	Օգոստոս 24.
ՉԱԽԻՐԷ	
ՊՈՒՂՏՍՑ	
Վալօն 54-60 լիպ.	8.80 / 9. 40
Արապա 52-62 լիպ.	7.90 / 11.10
ՍՐՔԱ,	
Վալօն 100 քիւ 4ին	10. / 10. 40
Արապա Ելնի 42-47 լիպ.	5.80 / 6. 30
ԵՈՒՂԱՑ արապա 33/36 լպ.	4.40/4.60
Վալօն 100 քիւ	10. / 10. 50
ՅԱՍՈՒԼԵԱ 100 քիւ	21-24
ՌԱԲԻՑԱ 100 »	19. 20 19.60
Արապա 100 քիւ	16-18
ՏԱՐ արապա 4էքթ.	եօգ
ԳՕԼՁ արապա 55-60 լպ.	11. / 12.20
ՄԻՍԻՐ 57-58 լպ.	եօգ
» 100 քիւ	11.20- 11. 90
ՉԱՎՏԱՐ արապա	8. 60/ 8. 80
» 100 քիւ	11. 80 / 12.
Կիւնտէ 50-60 վալօն վէ 600-700	
արապա կէլմէքտէ . վալօն մուսմէ-	
լէսի նաբօլէօն 20 քիւ. արապա մու-	
սմէլէսի նաբօլէօն 20. 20	
ՍԱՐԱՑԻՑԷ	
նաբօլէօն 20, 20 քիւսիք	
Օսմ. լիւրսը 22, 75 ալթուն ֆրանք	
ՊԱԳԱԼԻՑԷ	
Վարնա ըրադասընտա պագգալիյէ	
մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթուն	
ֆրանք իլէ :	
ԳԱՀՎԷ	2.10/ 2.20
ՇԷԲԷՐ նէմէ	73.
ՇԷԲԷՐ քէսմէլ սանտը	37. 50
ԲԻՐԻՆՃ ձէնօվա չուվալը	42
» ճարօն »	34 .
» Ինկիլիդ »	28.
Բիդօ »	49.
ԿԱՉ Սանտըլը	11. 40
ՉԷՑԹԻՆ Եաղը քիւ	1.-1. 10
ԳՈՒՐՈՒ Եւզիւմ	25

Одговорникъ А. Курбетиянъ
печатица Д. Тодоровъ и С-ие-Варна